ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

23 օգոստոսի չորեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

116
(2782)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

Ո՞Ր ԵՐԿՐԻ ՔԱՂԱՔԱՑԻ ԵՆ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ



Հայկ Մարությանը, որ մոնոներկայացումներից հետո որոշել է նախընտրական հյուրախաղերով շրջել մայրաքաղաք Երեւանում, պետք է ազնիվ պատասխանի մի կարեւոր հարցի. իր կինն ու երեխաները ո՞ր երկրի քաղաքացիներ են: «Ժողովուրդ» օրաթերթը, իհարկե, երկու օր շարունակ փորձեց քաղաքապետի թեկնածու Հայկ Մարությանից կամ նրա թիմից պարզել, թե արդյոք Մարությանի երեխաները եւ կինը՝ Իվա Մարությանը, Չեխիայի Հանրապետության քաղաքացիներ են, թե ոչ, արդյոք նրանք երկքաղաքացիներ են, սակայն ապարդյուն. չստացվեց: Պետական կառույցներն էլ այս ինֆորմացիան համարում են անձնական տվյալ՝ գաղտնիք:

Բայց «Ժողովուրդ» օրաթերթին տեղեկություններ են հասել առ այն, որ նրանք օտարերկրյա քաղաքացիներ են: Հուսանք՝ այս հրապարակումից հետո շատ թափանցիկ «քաղաքապետը» իր առաջիկա մոնոներկայացումներից մեկում կբացատրի, թե իր ընտանիքի անդամները որ երկրի քաղաքացիներ են, որով ի ցույց կդրվի նաեւ նրա սերն ու վերաբերմունքը հայրենիքի նկատմամբ:

Երկար քննարկումներից ու խժդժոցներից հետո ՔՊ նախընտրական շտաբի պետի տեղակալների հարցը լուծվել է: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՔՊ-ի նախընտրական շտաբի պետ Արմեն Փամբուխչյանի տեղակալներն են ՔՊ խմբակցության պատգամավոր Վիլեն Գաբրիելյանը եւ ՏԿԵ նախարար Գնել Սանոսյանը: «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ շտաբի պետի տեղակալների հարցը իսկական կռվախնձոր է դարձել իշխող ուժի ներսում: Մի կողմից՝ Տիգրան Ավինյանն էր փորձում իր մտերիմներին տեղավորել այդ պաշտոններում, մյուս կողմից՝ Արմեն Փամբուխչյանն էր ուզում իր հավատարիմ ընկերներին տեղավորել այդ պաշտոնում: Ավինյանը նպատակ ուներ տեղակալներից մեկի պաշտոնում «կարգել» Երեւանի ՔՊ խմբակցության ավագանու անդամ Արմեն Գալջյանին, իսկ Փամբուխչյանը՝ իր մտերիմ ընկեր, ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Վիլեն Գաբրիելյանին: Ստացվում է՝ տեւական պայքարից հետո վերջիվերջո Արմեն Փամբուխչյանը հասավ իր նպատակին:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Հակակոռուպցիոն դատարանում երեկ թեժ է եղել: Դավիթ Տոնոյանը դատական նիստի ժամանակ ձայնի իրավունք է խնդրել ու վրդովված հայտարարություն արել: Ինչպես հայտնի է, պաշտպանության նախկին նախարար Դավիթ Տոնոյանի պաշտպանները դեռեւս 2023թ. մայիսի 29-ին միջնորդություն էին ներկայացրել ՀՀ հակակոռուպցիոն դատարան՝ Դ. Տոնոյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը այլ խափանման միջոցով փոխարինելու մասին, որը դատարանի կողմից մերժվել էր: Այդ դատական ակտի դեմ պաշտպանները ներկայացրել էին վերաքննիչ բողոք, եւ Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանը, 2023թ. հուլիսի 27-ի որոշմամբ պաշտպանների բողոքը բավարարելով, բեկանել էր Հակակոռուպցիոն դատարանի որոշումը՝ վարույթն ուղարկելով նոր քննության: Իսկ, ահա, արդեն գրեթե մեկ ամիս անց Վերաքննիչ դատարանի որոշման պահանջները չեն կատարվել, եւ Դավիթ Տոնոյանի խափանման միջոցի փոփոխության հարցը չի քննարկվում, որի վերաբերյալ, մեր ունեցած տեղեկություններով, վերջինս իր վրդովմունքն է արտահայտել 2023թ. օգոստոսի 22-ին տեղի ունեցած դատական նիստի ընթացքում՝ հայտարարելով, որ Հակակոռուպցիոն դատարանի դատավոր Վահե Դոլմազյանը դիտավորյալ է ձգձգում դատական նիստերը, նախատեսվածից ավելի քիչ ժամանակ է հատկացնում սույն գործով քննությանը, որպեսզի խափանման միջոցի հարցը կրկին չքննարկի: Նկատենք, որ այդ ընթացքում Վերաքննիչ դատարանի որոշման վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանը որոշում կկայացնի:



Սեպտեմբերի 11-ից մեկնարկելու է ութերորդ գումարման Ազգային ժողովի աշնանային նստաշրջանը: Այս ընթացքում ԱԺ պատգամավորները դեռ գտնվում են արձակուրդում, սակայն «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ արդեն սեպտեմբերի չորսից խորհրդարանում կյանքն ակտիվանալու է: Բանն այն է, որ լիագումար նիստերի օրակարգը կազմելու համար պետք է տեղի ունենա հանձնաժողովների նիստեր, որոնք սովորաբար կայանում են հերթական նստաշրջանից մեկ շաբաթ առաջ: Այսպիսով, տեղեկացանք անգամ, որ արդեն կան նախագծեր, որոնք լինելու են այդ հանձնաժողովների նիստերի օրակարգերում: Խոսքը հիմնականում կառավարության կողմից արդեն իսկ ընդունված եւ խորհրդարան ուղարկված նախագծերի մասին է: Իհարկե, կան նաեւ նախագծեր, որոնք չեն քննարկվել դեռ գարնանային նստաշրջանում եւ կրկին քննարկման են ենթակա արդեն սեպտեմբերից գումարվող նստաշրջաններում: Դեռ հուլիսի 31-ին օրակարգ մտած նախագծերից մեկով առաջարկվում է փոփոխություն կատարել «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման եւ սոցիալական երաշխիքների մասին» օրենքում: Ըստ այդ օրենսդրական նախագծի՝ առաջարկվում է 60 տոկոս հավելում սահմանել առաջին Ատյանի ընդհանուր իրավասության դատարանի, Սնանկության դատարանի եւ Վարչական դատարանի դատավորների համար: Մեկ այլ նախագծով էլ պետք է վավերացվի մի արձանագրություն, որը վերաբերում է բոլոր դեպքերում մահապատժի վերացմանը: Խոսքը թիվ 13 արձանագրության մասին է:

ՊԱՐՁԱԲԱՆՈՒՄ

Ո՞ՒՄՆ Է ԱՏՐԱԿՑԻՈՆՆԵՐԻ ԲԻԶՆԵՍԸ

Երեւանի ավագանու անդամ Սերգեյ Գյոզալյանը շարունակում է պնդել, որ ինքը որեւէ կապ չունի Օպերայի եւ բալետի թատրոնի շենքի մոտակայքում տեղադրված հսկա ատրակցիոնի հետ:

«Ժողովուրդ» օրաթերթը օրեր առաջ գրել էր, որ Երեւանի կենտրոնում՝ Օպերայի եւ բալետի թատրոնի հենց հարակից հատվածում, խաղային ատրակցիոն է տեղադրվել: Ատրակցիոնը ուժային չափիչ ֆունկցիա ունի. հարվածում ես, եւ, ըստ սանդղակի, չափում է հարվածի ուժը:

Ինչպես մեր աղբյուրներն են փոխանցում, ատրակցիոնի իրական «տերը» Երեւանի ավագանու անդամ Սերգեյ Գյոզալյանն է:

Վերջինս, հիշեցնենք, նախկինում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամ է եղել, ընդգրկված է եղել ՔՊ-ի ավագանու ցուցակում, բայց պատերազմից հետո՝ 2020թ.-ին, նա լքել է կուսակցությունը. հիմա ավագանու անկախ անդամ է:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Սերգեյ Գյոզալյանը նշեց, որ թեեւ զբաղվում է ատրակցիոնների բիզնեսով, բայց կոնկրետ Օպերայի եւ բալետի թատրոնի շենքում տեղադրված ատրակցիոնի հետ կապ չունի, իսկ թե որտեղ են տեղադրված իրեն պատկանող ատրակցիոնները, Սերգեյ Գյոզալյանն այդպես էլ չցանկացավ բացահայտել:

«Ժողովուրդ» օրաթերթն այս առնչությամբ մի քանի հարց է ուղղել Սերգեյ Գյոզալյանին:

-Պարոն Գյոզալյան, ինչո՞ւ պատերազմից հետո լքեցիք կուսակցությունը: Պատերա՞զմն է եղել պատճառը, թե՞ այլ տարաձայնություններ ունեիք թիմակիցների հետ:

-Պարզապես չեմ ցանկացել ինձ վրա պատասխանատվություն վերցնել այն քաղաքական որոշումների եւ գործունեության համար, որոնց հետ ես համաձայն չեմ: Կարծում եմ՝ սխալ կլիներ, որ ես մնայի կուսակցության անդամ եւ չկիսեի նրանց ընդունած որոշումների հետեւանքները: Եթե ես դեմ եմ նրանց տեսակետներին, ո՞նց կարող էի մնալ թիմում: Դեռ պանդեմիայից հետո, երբ տեսնում էի անհամաձայնեցված հայտարարություններ, տրամաբանությունից դուրս որոշումներ, ես այդ ժամանակ արդեն որոշել էի դուրս գալ թիմից, բայց պատերազմից հետո արդեն վերջնական դիմում եմ գրել: Երբ ավագանիում մանդատ վերցնելու հերթս հասավ, ես որոշեցի, որ մանդատը պահեմ, բայց կուսակցությունից դուրս գամ, քանի որ կարծում եմ՝ իմ փորձով կարող եմ օգուտ տալ Երեւանին:

-Դուք 2020թ.-ից քաղաքապետարանում եք. այս երեք տարվա ընթացքում կնշե՞ք փոփոխություններ, որոնք Երեւանը ավելի հարմարավետ եւ գրավիչ են դարձրել զբոսաշրջիկների համար:

-Ոտքի վրա չեմ կարող հիշել, միանգամից դժվարանում եմ ասել, այսպես համապատրաստից չեմ կարող պատասխանել:

-Երեւանում այս պահին ամենաառաջնահերթ խնդիրներից են շինաղբը, օդի փոշին, աղտոտվածությունը: Ինչո՞ւ, որպես ավագանու անդամ, չեք բարձրաձայնում այս խնդիրները, պարտադրում, որպեսզի շուտ լուծվեն:

-Ես միակ մարդն եմ, որ բարձրաձայնել եմ այդ խնդիրների մասին, վերջին անգամ ավագանու նախավերջին նիստին եմ բարձրաձայնել, որ քաղաքը պատրաստ չէ այս ծավալի շինարարություններին տեխնիկական առումով, այսինքն՝ չունեն բավարար տեխնիկական միջոցներ, որպեսզի չափեն օդի աղտոտվածության աստիճանը, ոչ էլ համապատասխան մարմինները կարող են վերահսկողություն կատարել, օրենսդրական կարգավորումները եւս թույլ են, մարդկային ռեսուրս էլ չունենք: Երեւանն այս մակարդակի փոշու մեջ կորած երբեք չի եղել, սա անհետեւանք չի մնում, այդ փոշին մենք ենք շնչում, մեր թոքերի մեջ է մտնում այդ վնասակար նյութը. հիմա որ սրտանոթային ու ալերգիկ հիվանդությունների այսչափ աճ ունենք, դրա հետեւանքն է:

-Ասում եք, որ բարձրաձայնում եք խնդիրների մասին, իսկ ինչո՞ւ դրանք այդպես էլ լուծում չեն ստանում, հակառակը՝ ավելի են խորանում:

-Վերջին նիստի ժամանակ ավագանին նախագիծ ընդունեց, որ հսկողություն պետք է իրականացվի, թեեւ շատ թույլ որոշում էր, բայց էլի ինչ-որ լուծում էր, քանի որ անտեսել այս խնդիրն այլեւս անհնար է: Երբ դու վերահսկողության մեխանիզմներ չունես ու այս ծավալի շինթույլտվություններ ես տալիս՝ չմտածելով մարդկանց առողջության մասին, սա խոսում է արդեն մարդկանց անպատասխանատվության մասին: Շինարարությունների ժամանակ ոչ մի նորմ չի պահպանվում. օրինակ՝ շինարարության ժամանակ կողքի շենքի բնակիչները փոշուց պետք է պաշտպանվեն, աղմուկից պետք է պաշտպանվեն, էլի լիքը նորմեր կան, որ պետք է պահպանվեն ու չեն պահպանվում, որեւէ մեխանիզմ չկա, որ հսկվի այս ամենը:

-«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ Օպերայի եւ բալետի թատրոնի շենքի մոտակայքում տեղադրված հսկա խաղային, կարմիր ատրակցիոնը Ձեզ է պատկանում: Թեեւ պնդում եք, որ հիմա այն Ձեզ չի պատկանում, բայց մենք ունենք փաստեր, որ դա նախկինում Ձեզ է պատկանել, սակայն, երբ որոշել եք դուրս գալ կուսակցությունից, հետ են վերցրել Ձեզանից ատրակցիոնը:

-Օպերայում գործող ապարատի հետ երբեւէ առնչություն չունեմ, նախկինում էլ չեմ ունեցել: Ես բոքսի ապարատի հետ կապ չեմ ունեցել. եթե որեւէ կապ ունենայի, առանց ամաչելու կասեի: Ես այսօրվա դրությամբ ավագանու միակ անդամն եմ, որ ընդդիմանում եմ իշխող քաղաքական ուժին. եթե անօրինական բան արած լինեի, կարգելեին, չէին թողնի: Ես, անկեղծ ասեմ, որ ունեմ նման բիզնես, բայց Օպերայի մոտակայքում տեղադրվածը իմը չէ:

-Իսկ Ձեզ պատկանող ատրակցիոնները որտե՞ղ են տեղադրված:

-Որտեղ որ գտնվում է, ենթադրենք՝ Հայաստանի մարզերից մեկում կամ Երեւանի բակերից մեկում, բայց շեշտում եմ, որ կոնկրետ Օպերայի բակում ես ոչ մի բիզնես չեմ ծավալում, այդ ապարատի հետ որեւէ առնչություն չունեմ եւ չեմ ունեցել:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՔԱՐՈԶԱՐՇԱՎ՝ ԱՌԱՆՑ ՇՏԱԲԻ

Երեկ՝ օգոստոսի 23-ին, կմեկնարկի Երեւանի ավագանու ընտրությունների քարոզարշավը: Ինչպես հայտնի է, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության գլխավոր շտաբը Հյուսիսային պողոտայում է լինելու:

«Ժողովուրդ» օրաթերթն արդեն տեւական ժամանակ է՝ փորձում է պարզել, թե ՔՊ-ականները ինչ ձեւաչափով են սկսելու իրենց քարոզարշավը, ու ովքեր են լինելու քարոզարշավն իրականացնողները: ՔՊ-ական մեր աղբյուրները հայտարարում են, թե որեւէ տեղեկություն չունեն ու սպասում են ՔՊ շտաբի ղեկավար Արմեն Փամբուխչյանի որոշմանը: Ըստ մեր աղբյուրների՝ Փամբուխչյանն էլ կարծես «անհետ» կորած լինի, ու ոչ ոքի չի հաջողվում հասկանալ իրենց առաջիկա անելիքները:

«Ժողովուրդ» օրաթերթը եղավ Հյուսիսային պողոտայի ՔՊ գլխավոր շտաբում՝ պարզելու համար, թե ինչ աշխատանքներ են իրականացնում՝ առաջիկա ընտրությունների հետ կապված: Սակայն, արի ու տես, շտաբը փակ է, կարելի է ասել՝ դեռեւս վերանորոգման աշխատանքներ են կատարվում ներսում: Ու թե ինչպես են ՔՊ-ականներն այդտեղ նախընտրական աշխատանքներ իրականացնելու, անհայտ է, քանի որ շտաբի ղեկավար Արմեն Փամբուխչյանն իսկապես «կորել է», ոչ մի կերպ նրան գտնել չի հաջողվում: Թե այսօր ինչ կանեն ՔՊ-ականները, այս պահին դեռեւս անորոշ է:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԽՈՒԶԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Երեխայի նկատմամբ դաժան վերաբերմունքի գործով իրավապահները մտել են Նուբարաշենի բանտ. ի՞նչ են փնտրում Գավառցի երեխայի նկատմամբ դաժան վերաբերմունք ցուցաբերած մոր՝ Աննա Արեւշատյանի նկատմամբ հարուցված քրեական գործով իրավապահները մտել են Նուբարաշենի բանտ ու խուզարկություն իրականացրել: Բանն այն է, որ Աննա Արեւշատյանի ամուսինը՝ Թաթուլ Մադաթյանը, կալանավորված է սեփական երեխաների նկատմամբ սեռական բռնություն իրականացնելու համար եւ այս պահին կալանքը կրում է «Նուբարաշենի» քրեակատարողական հիմնարկում:

«Ժողովուրդ» օրաթերթին հասած բացառիկ տեղեկությունների համաձայն՝ հենց այս դեպքով էլ Նուբարաշենի բանտում խուզարկություն է իրականացվել՝ հատկապես սեռական բռնություն իրականացրած հոր՝ Մանվել Մադաթյանի խցում: Իսկ ի՞նչ է հայտնաբերվել. «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ խցում եղել են հեռախոսներ, Թաթուլ Մադաթյանի մոտ եւս եղել է հեռախոս: Իսկ թե ինչ է եղել նրա հեռախոսի մեջ, կներկայացնենք առաջիկայում: Մեր ստացած այս տեղեկությունները փորձեցինք պարզել ՀՀ ԱՆ ՔԿ ծառայության լրատվական բաժնից, որտեղից ի պատասխան հայտնեցին. «ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պարբերաբար իրականացվում են խուզարկություններ: Ինչ վերաբերում է Ձեր կողմից մատնանշված կալանավորված անձի խցում խուզարկություն կատարելուն կամ դրա արդյունքներին, տեղեկացնում ենք, որ, ըստ ՀՀ ԱՆ համակարգում գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկի, տվյալ տեղեկությունը համարվում է գաղտնի, ուստի Քրեակատարողական ծառայությունը նպատակահարմար չի համարում հանրայնացնել»: Այսպիսով, խուզարկության փաստը պատոնապես հաստատվեց: Հիշեցնենք, որ քրեական վարույթով պարզվել է, որ Աննա Արեւշատյանն իր 12-ամյա դստեր մասնակցությամբ մանկական պոռնոգրաֆիա ստեղծելու, այն հաղորդակցական տեխնոլոգիաների միջոցով այլ անձանց սեռական կարիքները բավարարելու նպատակով իրացնելու դիտավորությամբ, անչափահաս դստեր նկատմամբ դաժան վերաբերմունք դրսեւորելով, ստեղծել եւ իրացրել է մանկական պոռնոգրաֆիա: Մանկական պոռնոգրաֆիայի ստեղծման ժամանակ անչափահաս դստերը պատճառել է ֆիզիկական ուժեղ ցավ, նրա նկատմամբ բռնություն գործադրելով՝ կատարել է սեքսուալ բնույթի գործողություններ, իսկ պոռնկագրական բնույթի նյութի պատրաստմանը ներգրավել է նաեւ իր 12 տարին չլրացած երկու աղջիկ երեխաներին: Ծնողները կալանավորված են:

ՊԱՅՔԱՐ

ԱՐՑԱԽԻ ԱԺ ՆԱԽԱԳԱՀԻ ԿՈՉԸ

«Լինելով Արցախի Հանրապետության քաղաքացի եւ Ազգային ժողովի նախագահ՝ միշտ պայքարել եմ Արցախի Հանրապետության նախագահի, Ազգային ժողովի եւ ուժային կառույցների՝ որպես պետականության հիմք ներկայացնող ինստիտուտների կայացման ու հզորացման համար»,- Արցախի Ազգային ժողովի նախագահ Դավիթ Իշխանյանը կոչով է հանդես եկել:

«Անընդունելի է վերջին օրերին հանրային հարթակներում կեղծ համախմբման կոչերի քողի տակ հանդես եկող որոշ դեմքերի՝ մեր պետականության հիմքերի կազմաքանդմանն ուղղված քայլերը:

Ես Ազգային ժողովի նախագահի պաշտոնը ստանձնել եմ քաղաքական ուժերի համախոհության արդյունքում: Համոզված եմ, որ այդ համախմբումը միս ու արյուն է տալու պետականության պահպանման վեհ գաղափարին, որի լեգիտիմ ներկայացուցիչներն են Նախագահի եւ Ազգային ժողովի ինստիտուտները»:

Դավիթ Իշխանյանի խոսքով՝ բոլոր այն քայլերը, որոնք միտված են սեպ խրելու եւ ընդհանրապես պետական կառույցների տարանջատմանն ու հակադրությանը, բացառապես թշնամանք են ստեղծում երկրի ներսում եւ ջուր լցնում թշնամու ջրաղացին:

«Վստահ եմ՝ այս ծանր օրերին ուժային եւ իրավապահական կառույցների ներկայացուցիչները գիտակցում են պետականության պահպանման գինն ու կարեւորությունը ու նրանց վստահված մեր անվտանգությունն ու ներքին անդորրի պահպանումը:

Որպես երկրի քաղաքական ղեկավարությունը ստանձնած երկրորդ դեմք՝ ինչպես ժամանակին մարտի դաշտում անմասն չեմ մնացել պետականության ստեղծման գործընթացին՝ հավատարիմ եւ հաստատակամ մնալով մեր նահատակների որդեգրած նպատակներին, գիտակցելով ներքին համերաշխության կարեւորությունը, պատրաստ եմ իմ բոլոր ուժերը ներդնել՝ համատեղ որոշումներ կայացնելու եւ այս իրավիճակից մեր հանրապետությունը նվազագույն վնասներով դուրս բերելու ուղղությամբ: Որպես օրենսդիր մարմնի ղեկավար՝ համոզված եմ, որ ԱՀ Ազգային ժողովը կստեղծի բոլոր պայմանները՝ դառնալու ոչ միայն քաղաքական քննարկումների, այլեւ հանրության խնդիրները ներկայացնող եւ լուծումներ առաջադրող հարթակ:

Վստահեցնում եմ ձեզ, որ Ազգային ժողովը պատրաստ է հյուրընկալել հանրության կառուցողական միտում ունեցող տարբեր շերտերի եւ պատրաստակամ է լսելու բոլորի կարծիքը եւ այն ներկայացնելու թե՛ ԱՀ նախագահին, թե՛ պատկան մարմիններին:

Համոզված եղեք, որ այս ծանր կացությունից դուրս կգանք մեր հաստատակամ, արդար, անմնացորդ նվիրվածության ու համերաշխության շնորհիվ:

Կոչ եմ անում բոլորիդ ցուցաբերել զգոնություն եւ զսպվածություն՝ ի շահ մեր երկրի ու ժողովրդի»:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԴԵՍՊԱՆԸ՝ ՇԻՐԱԿՈՒՄ

Շիրակի մարզպետ Մուշեղ Մուրադյանն աշխատակազմի պատասխանատուների հետ այսօր հյուրընկալեց ճանաչողական այցով Գյումրիում գտնվող ՀՀ-ում Ֆրանսիայի նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Օլիվիե Դըկոտինյիին:

Շիրակի մարզպետը շնորհավորեց դեսպանին պատասխանատու պաշտոնում նշանակվելու առթիվ՝ մաղթելով հաջողություններ նախաձեռնություններում. «Ուրախ եմ Ձեզ հյուրընկալելու Շիրակի մարզում: Գիտեմ, որ առաջին անգամ եք Գյումրիում, վստահ եմ՝ մեր մարզն ու քաղաքը կհավանեք»:

Մարզպետը դեսպանին ներկայացրել է Շիրակի մարզն ու մարզի հնարավորությունները, ներուժն ու անդրադարձել հիմնախնդիրներին ու առաջիկա անելիքներին. «Լինելով արդյունաբերական լուրջ կենտրոն՝ երկրաշարժից հետո Շիրակը կորցրեց երբեմնի հզորություններն ու տասնամյակներ շարունակ վերականգնման ու կառուցման ճանապարհով անցավ, բազմաթիվ ծրագրեր են իրականացվել, սակայն դեռ անելիքներ ունենք: Որքան էլ դժվար ճանապարհ է անցել մեր մարզը, պահպանել է իր առանձնահատուկ ոգին, ունի մեծ պոտենցիալ ինչպես զբոսաշրջության եւ մշակույթի զարգացման, այնպես էլ տարբեր բնագավառներում զարգացման նոր ուղի բռնելու համար: Լիահույս եմ, որ հայ-ֆրանսիական միջմարզային հարաբերություններն այսուհետ էլ կշարունակեն դինամիկ զարգանալ, իսկ մենք կկարողանանք համատեղ ջանքերով դրանց սերտացմանը նպաստել: Շիրակի մարզն ու համայնքներն արդեն ունեն համագործակցության փորձ Ֆրանսիայի տարբեր շրջանների հետ, վստահ եմ՝ համատեղ ջանքերով այդ գործակցությանը նոր շունչ ու թափ կհաղորդենք»:

Դեսպանը շնորհակալություն հայտնեց մարզպետին ջերմ ու անմիջական ընդունելության համար՝ նշելով, որ, որպես դեսպան, ջանք չի խնայելու ապակենտրոնացված համագործակցության ամրապնդման համար. «Պարոն մարզպետ, ուրախ եմ Ձեզ հետ հանդիպելու եւ Ձեր անմիջականության համար շնորհակալ եմ: Դուք ճիշտ եք՝ Շիրակի մարզի հետ Ֆրանսիայի տարբեր շրջաններ ու քաղաքներ արդեն բարեկամություն են հաստատել, ես իմ կողմից վստահեցնում եմ, որ ամեն ինչ անելու եմ մեր հագործակցությունը նոր հարթություն տեղափոխելու, նոր ուղղություններով զարգացնելու համար, խոսքս թե՛ տնտեսական, թե՛ մշակութային համագործակցությանն է առնչվում»:

Հանդիպման ժամանակ անդրադարձ կատարվեց նաեւ տնտեսական, մշակութային, առողջապահական, կրթական բնագավառներում համագործակցությանն ու համայնքների միջեւ ապակենտրոնացված գործակցության նոր հեռանկարներին:

Հանդիպման ավարտին մարզպետը հուշանվեր փոխանցեց դեսպանին՝ վստահություն հայտնելով որ հանդիպումները կկրեն պարբերական բնույթ, որոնց արդյունքում կնախանշվեն ու կիրականացվեն նոր ծրագրեր:

ԱՐՁԱԳԱՆՔ

ԱԴՐԲԵՋԱՆԸ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ Է ՆԵՏՈՒՄ

Ադրբեջանը Լեռնային Ղարաբաղում ղատանդ է ղահում 120 հազար մարդու, Ադրբեջանը մարտահրավեր է նետում առաջին հերթին Հայաստանի եւ միջազգային հանրության ջանքերին՝ ուղղված տարածաշրջանում իրական խաղաղության հաստատմանը: Այս մասին օգոստոսի 22-ին Երեւանում Բելգիայի ԱԳ նախարարի հետ համատեղ ճեղազրույցում ասել է Հայաստանի արտգործնախարար Արարատ Միրզոյանը:

Նրա խոսքով՝ Հայաստանը միջազգային գործընկերներից ակնկալում է քաղաքական կամք դրսեւորել եւ իրական քայլեր ձեռնարկել՝ փոխելու Ադրբեջանի ռազմատենչ, անմարդկային, ապակառուցողական պահվածքը:

«Մենք շարունակում ենք հայտարարել, որ Բաքվի գործողությունները հիմնված են Լեռնային Ղարաբաղում էթնիկ զտումների բաց քաղաքականության վրա:

Ես գործընկերոջս ասացի, որ Ադրբեջանը պարբերաբար խախտում է հրադադարը Լեռնային Ղարաբաղում եւ թիրախավորում է հայկական դիրքերը Հայաստանի եւ Ադրբեջանի սահմանին: Այս մասին հայտարարել է նաեւ Հայաստանում ԵՄ առաքելությունը:

Ադրբեջանը շարունակում է խախտել 2020 թվականի նոյեմբերի 9-ի հայտարարության բոլոր դրույթները՝ ներառյալ հայ ռազմագերիներին, իր կողմից կալանավորված խաղաղ բնակիչներին վերադարձնելու պարտավորությունը եւ անհայտ կորածների ճակատագիրը պարզելու ջանքերը:

Հայաստանը հավատարիմ է բանակցությունների միջոցով տարածաշրջանում երկարաժամկետ խաղաղության հասնելուն»,- հավելեց Միրզոյանը:

Նա ընդգծեց, որ Բելգիայի արտգործնախարարի հետ հանդիպմանը կողմերը քննարկել են Լեռնային Ղարաբաղում սրված ճգնաժամը, որը ստեղծվել է Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքի անօրինական շրջափակման արդյունքում եւ շարունակվում է ավելի քան 8 ամիս:

«Մենք քննարկել ենք Լեռնային Ղարաբաղում անդառնալի հետեւանքները: Անդրադարձանք Բելգիայի եւ ԵՄ այլ երկրների, ինչպես նաեւ միջազգային գործընկերների հասցեական գնահատականներին: Չնայած դրան, ինչպես նաեւ Արդարադատության միջազգային դատարանի որոշմանը՝ Ադրբեջանը շարունակում է Լաչինի միջանցքի շրջափակումը»,- հավելել է արտգործնախարարը:

Բացի այդ, նրա խոսքով՝ հանդիպմանը նշվել է երկրների միջեւ քաղաքական երկխոսության բարձր մակարդակը, զրուցակիցներն անդրադարձել են երկկողմ գործընկերության ընդլայնման հեռանկարներին:

Պատրաստակամություն է հայտնվել ակտիվացնել համագործակցությունը տնտեսության, գիտության, կրթության եւ բարձր տեխնոլոգիաների ոլորտներում:

Միրզոյանը ողջունել է Երեւանում դեսպանություն բացելու՝ Բելգիայի կառավարության որոշումը, որը նոր լիցք կհաղորդի երկու երկրների միջեւ դինամիկ զարգացող հարաբերություններին:

«Մենք կարեւորել ենք համագործակցությունը նաեւ խորհրդարանական մակարդակում՝ հաշվի առնելով Բելգիայի օրենսդիր մարմնի համերաշխությունը մեզ համար կարեւոր հարցերի շուրջ:

Քննարկեցինք նաեւ համագործակցությունը միջազգային մակարդակով, Հայաստան-ԵՄ մակարդակով: Այստեղ շահերի շրջանակը նույնպես բավականին լայն է՝ սկսած ժողովրդավարական բարեփոխումների աջակցությունից մինչեւ տնտեսական զարգացում, ինչպես նաեւ անվտանգության հարցերի շուրջ երկխոսություն եւ Հայաստանում ԵՄ քաղաքացիական առաքելության գործունեությունը»,- ընդգծել է արտգործնախարարը:

Միրզոյանը շնորհակալություն հայտնեց Բելգիային այս առաքելությանը մասնակցելու համար:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ԵՄ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԵՏ

«Կեղծ ժողովրդավարություն է ՀՀ-ում». ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի՝ լիազորություններից ապօրինաբար զրկված նախագահ Թագուհի Թովմասյանը հրաժեշտի հանդիպում է ունեցել Հայաստանում ԵՄ պատվիրակության ղեկավար, դեսպան Ն. Գ. Անդրեա Վիկտորինի հետ:

«Դեսպանի հետ քննարկեցինք Հայաստանի եւ Արցախի անվտանգային մարտահրավերները: Ներկայացրի Հայաստանում կեղծ ժողովրդավարության իրական պատկերը եւ խորհրդարանական ժողովրդավարության խնդիրները»,- գրել է Թագուհի Թովմասյանը:

ԱԺ պատգամավորը հավելել է. «Իհարկե, տիկին Վիկտորինն ամենատեղեկացվածն է հայաստանյան խնդիրներից, բայց ես կարեւոր եմ համարում հստակ փաստերի ներկայացումը միջազգային մեր բոլոր գործընկերների շրջանում»,- ընդգծել է ընդդիմադիր պատգամավորը:

ԱՐՑԱԽԻՑ՝ ՀԱՅԱՍՏԱՆ

«Հանրապետական բժշկական կենտրոն» ՓԲԸ-ից 7 բուժառուներ ուղեկցողների հետ միասին անհետաձգելի մասնագիտացված բժշկական օգնություն ստանալու համար Կարմիր խաչի միջազգային կոմիտեի միջնորդությամբ եւ ուղեկցությամբ տեղափոխվել են ՀՀ մասնագիտացված բժշկական կենտրոններ: Այս մասին հայտնում է Արցախի առողջապահության նախարարությունը:

Նախատեսվում է օրվա ընթացքում ԿԽՄԿ մեքենաներով Արցախ վերադարձնել 7 բուժառուների ուղեկցողների հետ միասին, որոնք ժամանակին պետական պատվերի շրջանակներում ուղեգրվել են ՀՀ բուժում ստանալու համար:

Ադրբեջանական կողմը շարունակաբար արգելում է Կարմիր խաչի մեքենաներով խիստ անհրաժեշտ դեղորայքի եւ բժշկական պարագաների մատակարարումը Արցախ:

«Արեւիկ» բուժմիավորումում այս պահին ստացիոնար բուժում է ստանում 28 երեխա, 4-ը գտնվում է նորածնային եւ վերակենդանացման բաժանմունքում:

«Հանրապետական բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում ստացիոնար բուժում է ստանում 85 հիվանդ, 3 բուժառու գտնվում է վերակենդանացման բաժանմունքում, որից 2-ը՝ ծայրահեղ ծանր վիճակում:

Ո՞Վ Է ՄԱՄՈՒԼԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական շտաբի մամուլի քարտուղարի պարտականությունները վաղվանից կկատարի Երեւանի քաղաքապետարանի խոսնակ Հայկ Կոստանյանը: Նա մինչ ընտրությունների ավարտը լինելու է արձակուրդում, որպեսզի կատարի ՔՊ շտաբի քարտուղարի պարտականությունները:

Հիշեցնենք, որ մինչ այս ՔՊ շտաբի մամուլի քարտուղարի պարտականությունները կատարում էր Տաթեւ Հակոբյանը:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

«ՍՈՒՐՄԱԼՈՒ»

Ո՞Ր ԴԱՏԱՎՈՐՆ Է ՔՆՆՈՒՄ ԳՈՐԾԸ

«Սուրմալու» առեւտրի կենտրոնում նախորդ տարվա օգոստոսի 14-ին տեղի ունեցած ողբերգական պայթյունի գործը մտել է դատարան: Գործը քննվելու է Երեւանի ընդհանուր իրավասության դատարանում՝ դատավոր Գագիկ Պողոսյանի նախագահությամբ:

Նշենք, որ ամբաստանյալի կարգավիճակում է 3 անձ՝ Վահագն Հովհաննիսյանը, Գարիկ Վարդանյանը եւ Միեր Մարգարյանը: Վահագն Հովհաննիսյանը վարչական հսկողության տակ է, Գարիկ Վարդանյանի նկատմամբ բացակայելու արգելք է սահմանվել, Միեր Մարգարյանի նկատմամբ գրավ է կիրառվել:

Ըստ մեղադրանքի՝ Վահագն Հովհաննիսյանը «Երեւանի պահածոների գործարան» ՓԲ ընկերության տնօրեն Իրինա Էդուարդի Մադաթովայի հետ 2019 թվականի դեկտեմբերի 30-ին կնքված՝ «Առեւտրի իրականացման վայրի առեւտրի օբյեկտների, վաճառատեղերի եւ պահեստների տրամադրման» պայմանագրով առեւտրի կենտրոնում վարձակալելով ընկերության՝ Երեւան քաղաքի Արշակունյաց 15 հասցեում գտնվող առեւտրի կենտրոնի առեւտրի իրականացման վայրի թիվ 6 պահեստային (սառնարան) տարածքը եւ, նույն պայմանագրի 2.4.3 կետի պահանջների համաձայն, ստանձնելով վարձակալած տարածքի անվտանգ շահագործման, հակահրդեհային եւ սանիտարահիգիենիկ պայմանների ապահովման եւ իր մեղքով պատճառված վնասի դեպքում պատճառված վնասը փոխհատուցելու պարտավորությունները, խախտել է ՀՀ տարածքային կառավարման եւ արտակարգ իրավիճակների նախարարի՝ 2015 թվականի հունիսի 18-ի ? 595-Ն հրամանով հաստատված «Հրդեհային անվտանգության կանոնների» եւ ՀՀ ներքին գործերի նախարարի՝ 2002 թվականի մայիսի 27-ի թիվ 241 հրամանով հաստատված՝ «Հրագործական արտադրատեսակները պահելու եւ դրանք զանգվածային միջոցառումների ժամանակ օգտագործելու» պահանջները, որի հետեւանքով 2022 թվականի օգոստոսի 14-ին՝ ժամը 13:30-ի սահմաններում, տեղի է ունեցել պայթյուն, ինչի հետեւանքով անզգուշությամբ կյանքից զրկվել են ընդհանուր 17 անձինք, ինչպես նաեւ առաջացել են այլ ծանր հետեւանքներ:

Գարիկ Վարդանյանը, հանդիսանալով Վահագն Հովհաննիսյանի ընկերը, վերջինի կողմից առեւտրի կենտրոնի տարածքում Վահագն Հովհաննիսյանի եւ Միեր Մարգարյանի հետ համատեղ պահեստավորել է հրագործական արտադրատեսակներ՝ այդկերպ դրսեւորելով հանցավոր անփութություն, այն է՝ չի նախատեսել իր գործողությունների արդյունքում ուրիշ մարդու մահվան առաջացումը, սակայն պահեստներում պահվող հրագործական արտադրատեսակների քանակությամբ եւ պահման հատուկ կարգով պայմանավորված՝ պարտավոր էր եւ կարող էր դա նախատեսել, եթե գործեր ավելի զգույշ, որով խախտել է ՀՀ տարածքային կառավարման եւ արտակարգ իրավիճակների նախարարի՝ 2015 թվականի հունիսի 18-ի N՝ 595-Ն հրամանով հաստատված «Հրդեհային անվտանգության կանոնների» եւ ՀՀ ներքին գործերի նախարարի՝ 2002 թվականի մայիսի 27-ի թիվ 241 հրամանով հաստատված՝ «Հրագործական արտադրատեսակները պահելու եւ դրանք զանգվածային միջոցառումների ժամանակ օգտագործելու» պահանջները:

Միեր Մարգարյանը, հանդիսանալով Վահագն Հովհաննիսյանի ընկերը, վերջինի կողմից առեւտրի տարածքում Վահագն Հովհաննիսյանի եւ Գարիկ Վարդանյանի հետ համատեղ պահեստավորել է հրագործական արտադրատեսակներ՝ այդկերպ դրսեւորելով հանցավոր անփութություն:

Նշենք, որ գործով տուժողները դժգոհ են եւ՝ գործի նախաքննության ընթացքից, եւ՝ ԱԱԾ քննիչի՝ նախաքննության ավարտ հայտարարելու մասին որոշումից:

Օգոստոսի 14-ին լրացել է 16 անձի մահվան եւ մեկի անհետ կորելու պատճառ դարձած «Սուրմալու» առեւտրի կենտրոնի ողբերգական պայթյունի մեկ տարին:

Նշենք, որ 2021 թվականի ապրիլի 6-ին «Սուրմալու» առեւտրի կենտրոնում տեղի ունեցած հրդեհի հետեւանքով հարուցված քրեական գործը միացվել է 2022 թվականի օգոստոսի 14-ին նույն հասցեում տեղի ունեցած պայթյունի հետեւանքով նախաձեռնված քրեական վարույթին: Այն սկզբում քննվում էր Քննչական կոմիտեում, սակայն վերջերս գործը փոխանցվել էր ԱԱԾ-ին:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

ԿԱՆԱՆՑ ԳԱՂՈՒԹՈՒՄ Է

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ երեխայի նկատմամբ դաժան վերաբերմունք ցուցաբերած կինը տեղափոխվեց Աբովյանի քրեակատարողական հիմնարկ՝ բոլորին հայտնի կանանց գաղութ: Մեզ հայտնի դարձավ, որ նրան 7 օր կպահեն կարանտինային պայմաններում, ապա 7 օր անց կտեղափոխեն մեկուսարան: Վերջինս մեկուսարանում կմնա, մինչեւ դատավճիռ կայացվի, որից հետո դուրս կգա դատապարտյալների ընդհանուր խումբ:

Հիշեցնենք՝ քրեական վարույթով պարզվել է, որ Աննա Արեւշատյանն իր 12-ամյա դստեր մասնակցությամբ մանկական պոռնոգրաֆիա ստեղծելու, այն հաղորդակցական տեխնոլոգիաների միջոցով այլ անձանց սեռական կարիքները բավարարելու նպատակով իրացնելու դիտավորությամբ, անչափահաս դստեր նկատմամբ դաժան վերաբերմունք դրսեւորելով, ստեղծել եւ իրացրել է մանկական պոռնոգրաֆիա: Մանկական պոռնոգրաֆիայի ստեղծման ժամանակ անչափահաս դստերը պատճառել է ֆիզիկական ուժեղ ցավ, նրա նկատմամբ բռնություն գործադրելով՝ կատարել է սեքսուալ բնույթի գործողություններ, իսկ պոռնկագրական բնույթի նյութի պատրաստմանը ներգրավել է նաեւ իր 12 տարին չլրացած երկու աղջիկ երեխաներին: Կինն իրեն մեղավոր է ճանաչել եւ կալանավորված է:

ՍՊԱՆԵԼ ԵՆ ՏՐԱՆՍԳԵՆԴԵՐԻ

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ 28-ամյա տրանսգենդեր քաղաքացուն կյանքից զրկած երիտասարդը իրավապահներին ընդամենը ասել է, որ ինքն է զրկել նրան կյանքից: Թե ինչու է գնացել այդ քայլին, նա լռում է:

Ի դեպ, «Ժողովուրդ» օրաթերթին հասած լուրերի համաձայն՝ սպանված քաղաքացու տանը եղել են արժեքավոր իրեր, որոնք ենթադրյալ մարդասպանը չի տարել: Ասել է թե՝ ըստ նախնական վարկածի՝ նրա նպատակը վերոնշյալ բնակարանից գողությունը չի եղել, այլ ուրիշ խորքային դրդապատճառ կա, որի մասին կալանավորվածը լռում է:

Հիշեցնենք, որ օգոստոսի 20-ին՝ ժամը 17.04-ին, 911 ծառայությունից ՆԳՆ ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոն հաղորդում է ստացվել, որ Կողբացու փողոցի շենքերից մեկի մի բնակարանում հրդեհ է:

Նշված հասցե մեկնած ՆԳՆ փրկարար ծառայության աշխատակիցները հրդեհաշիջման աշխատանքներ կատարելուց հետո հայտնաբերել են դիակ:

Նշված հասցե օպերատիվ-քննչական խումբ է մեկնել: Դիակի վրա կտրած-ծակած վնասվածքներ են հայտնաբերվել: Ձեռնարկված միջոցառումների շնորհիվ պարզվել է դիակի ինքնությունը՝ Արմավիրի մարզի 28-ամյա բնակիչ:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԿՈՉ

ԴԻՄՈՒՄ Է ԱՐՑԱԽԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Գյումրիի վթարից կյանքից զրկված Հելենի քեռին՝ ազատամարտիկ, Արցախի մարտական խաչի շքանշանակիր Մուշեղ Սաֆարյանը, «Ժողովուրդ» օրաթերթի միջոցով կոչով դիմում է Արցախի իշխանություններին:

«Ես՝ Հելեն Դադայանի քեռի Մուշեղ Սաֆարյանս, կոչով դիմում եմ հայ ժողովրդին, Արցախի իշխանություններին, Արայիկ Հարությունյանին, պետնախարար Գուրգեն Ներսիսյանին: Արդեն 8-րդ օրն է՝ «Եվրասիա» համալսարանի ուսանող, Ճարտարի բնակչուհի Հելեն Դադայանի աճյունը գտնվում է Գորիսում: Այս օրերին բազմաթիվ ակցիաներ իրականացվեցին Երեւանում, Արցախում ու Կարմիր խաչի գրասենյակի մոտ, սակայն ոչ միայն չի ստացվում տեղափոխել աճյունը, այլ ամեն օր ստում են, թե ուրբաթ կլինի, թե երեքշաբթի: Արդյունքում դարձավ այս անմարդկային գազանությունների մասնակից եւ կատարող, առանց զգալու, որ ստեղծված անմարդկային իրավիճակը լուծելու միակ միջազգային կազմակերպությունն է:

Արցախի՛ իշխանություններ, կոչ եմ անում եւ պահանջում, որ անհապաղ, ոչ ուշ, քան այսօր կամ վաղը, փակել եւ վտարել Արցախից թուրքական Կարմիր խաչի մասնաճյուղը: Այդ կազմակերպությունը չի կատարել եւ չի կատարում ժնեւյան կոնվենցիայով իր հիմնական առաքելությունը, ըստ էության, Արցախի թուրքական Կարմիր խաչը հստակ կատարում է Ադրբեջանի իշխանությունների եւ անվտանգության մարմինների թելադրանքը եւ օրակարգով Արցախի ինտեգրմանը եւ թուրքացմանը՝ հիմնականում առողջ մարդկանց կեղծ փաստաթղթերով Արցախից տարհանելով եւ Գորիսից Արցախ քաղցրավենիք եւ պիցցա առաքելով:

Ակնհայտ է, որ թուրքական Կարմիր Խաչը ոչ միայն ձախողված է եւ շեղվել է իր հիմնական առաքելությունից, այլ հստակ սպառնում է Արցախի անվտանգությանը: ՀԵՏԱԳԱ ԱՐՅՈՒՆԱՀԵՂՈՒԹՅՈՒՆԻՑ ԽՈՒՍԱՓԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԿՈՉՍ ԴԻՏԵՔ ՈՐՊԵՍ ՀԱՂՈՐԴՈՒՄ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ: ԿՈՉ ԵՄ ԱՆՈՒՄ ԱՐՑԱԽԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆԸ եւ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆԸ կատարել Սահմանադրությամբ եւ օրենքով իրենց վերապահված գործառույթները, համապատասխան քայլեր ձեռնարկել ադրբեջանական ամենավտանգավոր դիվերսիոն խմբի գործնեությունը եւ հանցագործությունները կանխելու ուղղությամբ»:

Հիշեցնենք, որ Երեւան-Գյումրի ճանապարհին 11 մարդու մահվան պատճառ դարձած ողբերգական վթարի զոհերից 21-ամյա Հելեն Դադայանի մարմինը դեռ չեն կարողանում Արցախ տեղափոխել: Հելենը Մարտունու շրջանի Ճարտար համայնքից էր:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ օգոստոսի 21-ից 22-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 62 դեպք, որոնցից 5-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ՝ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄԻՑ

Տավուշի մարզում ուսուցիչների կամավոր ատեստավորման գործընթացը լիակատար ձախողվել է, որի ապացույցն են մարզպետարանից ստացված փաստական տվյալները: Տավուշի մարզպետարանից հայտնեցին, որ Տավուշի մարզի հանրակրթական դպրոցներում աշխատում է 1577 ուսուցիչ, ընդհանուր առմամբ, 2021 եւ 2022 թվականներին կամավոր ատեստավորման համար դիմած ուսուցիչներից 72-ը արձանագրել են 70 եւ ավելի տոկոս արդյունք: Մարզի դպրոցներում աշխատող, միջին մասնագիտական կրթություն ունեցող 133 ուսուցիչներից 68-ը հայտ է ներկայացրել կամավոր ատեստավորման համար: Կամավոր ատեստավորման համար 2023 թվականի հայտագրման վերաբերյալ մարզպետարանից տվյալներ չտրամադրեցին՝ պատճառաբանելով, որ գործընթացը դեռ չի ավարտվել:

ՊՆ–Ն ԷՔՍԿԱՎԱՏՈՐՆԵՐ ՉՈՒՆԻ՞

Բերդի համայնքապետարանի ինտերնետային կայքում տեղադրված է հետեւյալ հայտարարությունը. «Ի պատասխան ներբնակավայրային եւ դաշտամիջյան ճանապարհների բարեկարգման աշխատանքների հետ կապված ձեր բազմաթիվ հարցերի ու անհանգստության՝ տեղեկացնում ենք. Բերդ համայնքի տեխնիկական պարկում առկա երկու էքսկավատորները միաժամանակ մեկամսյա ժամկետով գտնվում են ՀՀ պաշտպանության նախարարության տրամադրության տակ: Համայնքի բնակավայրերում իրականացվող ներբնակավայրային եւ դաշտամիջյան ճանապարհների բարեկարգման աշխատանքների շրջանակում առաջացող խնդիրներն ու թերացումները, սահմանված ժամանակացույցից հնարավոր շեղումները պայմանավորված են տեխնիկայի բացակայությամբ: Հայցում ենք ձեր ներողամտությունը պատճառվող անհանգստության համար»: Սուրեն Պապիկյանը պաշտպանության նախարար դառնալուց հետո կարողանում է հայտնի «Փարավոն» ռեստորանում շքեղ հարսանիք անել, իր համար Երեւանում շքեղ բնակարան գնել, սակայն նրա գլխավորած Պաշտպանության նախարարությունը սահմանագոտում աշխատանքների համար պահանջվող էքսկավատորները սահմանամերձ, հոգսաշատ Բերդ համայնքից է վերցնում, համայնքի աշխատանքները մնում են չիրականացված:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՉԿԱՆ

Դիլիջանի համայնքապետարանի ինտերնետային կայքը տեղեկացնում է, որ Դիլիջան համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանը որոշում է կայացրել 2023 թվականի օգոստոսի 4-ից Ադամ Սարգսյանին նշանակել Դիլիջան համայնքի ղեկավարի օգնական: Դիլիջանի համայնքապետարանի ինտերնետային կայքում տեղեկություններ կան համայնքապետարանի բոլոր աշխատողների մասին, նույնիսկ համայնքապետարանի հավաքարարների մասին, սակայն համայնքի ղեկավարի նորանշակ օգնականի վերաբերյալ ոչ մի տեղեկություն չկա:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԸ ՀԱՎԵԼԱՎՃԱՐ ԿՍՏԱՆԱՆ

Նոր ուսումնական տարվան ընդառաջ՝ Արագածոտնի մարզից մեկնարկեցին ավանդական օգոստոսյան խորհրդակցությունները՝ հանրակրթական դպրոցների, նախադպրոցական հաստատությունների տնօրենների, փոխտնօրենների մասնակցությամբ:

Հանրակրթության ոլորտի բարեփոխումների, նոր ուսումնական տարվանից կիրառվելիք նորարարական մոտեցումների վերաբերյալ խորհրդակցությունը վարեց ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը: Խորհրդակցությանը մասնակցում էին նախարարության եւ մարզպետարանի հանրակրթության ոլորտի պատասխանատու պաշտոնատար անձինք, ԿՏԱԿ-ի, ԿՁՆԱԿ-ի ներկայացուցիչներ, ինչպես նաեւ մարզի 118 դպրոցների տնօրենները:

Նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը, ողջունելով ներկաներին, նախ ամփոփ տվյալներ ներկայացրեց Արագածոտնի մարզից ՀՀ բուհերի ընդունելության մրցույթին մասնակցած դիմորդների արձանագրած ցուցանիշների մասին՝ հղում կատարելով ԳԹԿ ներկայացրած տվյալներին:

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ նախարարի տեղակալն անդրադարձավ նաեւ պետական նոր չափորոշչի ներդրման, հանրակրթության կազմակերպման գործընթացի լավարկմանը, կրթական միջավայրի արդիականացմանը, ուսուցչի դերի վերաիմաստավորմանը, նրա աշխատանքի խրախուսմանը, կարողունակությունների զարգացմանը, կրթության ներառականության ընդլայնմանն ու, ընդհանուր առմամբ, կրթության որակի բարձրացմանն ուղղված բաղադրիչներին, որոնք արդեն իսկ կգործարկվեն 2023-2024 ուսումնական տարվանից:

Նշվեց նաեւ, որ սեպտեմբերից նոր չափորոշիչը ներդրվելու է 2-րդ, 5-րդ եւ 7-րդ դասարաններում, իսկ 10-րդ դասարանում այն կգործի հաջորդ ուսումնական տարվանից: Սեպտեմբերից մինչեւ 100 աշակերտ ունեցող դպրոցների ուսուցիչները, ինչպես նաեւ Հայաստանում ԲՏՃՄ առարկաների (բացառությամբ մաթեմատիկական առարկաներ դասավանդողների) բոլոր ուսուցիչները կստանան 25 % հավելավճար: Ի հավելումն նախարարի տեղակալի պարզաբանումների՝ ԿԳՄՍՆ ներկայացուցիչները խոսեցին աշակերտների կրթական իրավունքի իրացումն արդյունավետ կազմակերպելու կարեւորության մասին՝ շեշտադրելով թե՛ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար լավագույն պայմանների ապահովման եւ թե՛ բուլինգի, ընտանիքում երեխայի բռնության եւ այլ արատավոր երեւույթների վերահսկման եւ կանխարգելման բացառման կարեւորությունը: Հնչած հարցերի շուրջ տնօրենները հարցադրումներ են ներկայացրել, որոնց վերաբերյալ ծավալվել է քննարկում:

Արագածոտնի մարզպետի խորհրդական Արմեն Գրիգորյանը տեղեկացրեց, որ մինչեւ 2024 թվականը Արագածոտնի գրեթե բոլոր դպրոցները կունենան ԲՏՃՄ առարկաների լաբորատորիաներ, այդ թվում՝ 13-ը կգործարկվեն այս ուսումնական տարվա սկզբին: Նա անդրադարձել է նաեւ ՀՀ կառավարության՝ «300 դպրոց 500 մանկապարտեզ» ծրագրին՝ նշելով, որ Արագածոտնի մարզում 1-ին փուլով 22 դպրոց է կառուցվելու կամ վերակառուցվելու: Օհանավանի, Լուսակնի եւ Գառնահովիտի դպրոցների շինաշխատանքներն արդեն ավարտական փուլում են: Սասունիկի եւ Արագածավանի թիվ 1 դպրոցների կառուցման աշխատանքները մեկնարկել են, ուստի նոր ուսումնական տարվանից այս դպրոցների աշակերտների ուսումնական գործընթացը մինչեւ դպրոցների կառուցման ավարտը կկազմակերպվի մոտակա այլ դպրոցներում:

Արագածոտնի մարզ կատարած աշխատանքային այցի շրջանակում ԿԳՄՍ ներկայացուցիչները հանդիպեցին նաեւ նախադպրոցական ուսումնական հաստատությունների ղեկավարների հետ՝ նրանց իրազեկելով նախադպրոցական կրթությանն առնչվող նորամուծությունների մասին: Ընդգծվեց, որ նախադպրոցական կրթությունը՝ որպես կրթության առաջնային օղակ, ոչ պակաս կարեւորվում է ՀՀ կառավարության կողմից, ուստի մեկնարկած մեծածավալ բարեփոխումների թիրախը նաեւ այս ոլորտի զարգացումն է: «300 դպրոց 500 մանկապարտեզ» ծրագրով մարզերում շուտով կհիմնվեն նոր մանկապարտեզներ, կվերակառուցվեն գործողները: Բացի շենքային արդի պայմաններ ապահովելուց, ընթացքի մեջ են նաեւ բովանդակային փոփոխություններ, որոնք նախատեսում են նախակրթարանների եւ մանկապարտեզների մանկավարժական կազմի կարողությունների զարգացում եւ ֆինանսական նոր մոդելի կիրառում:

Հիշեցնենք, որ խորհրդակցությունների նպատակն է, նոր ուսումնական տարվան ընդառաջ, ոլորտի խնդիրները քննարկել տեղերում տնօրենների, հանրակրթության մարզային պատասխանատուների հետ:

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԿՊԱՀՊԱՆԻ ԱՃԻ ՏԵՄՊԸ

Հայաստանը ԵԱՏՄ երկրների շարքում տնտեսական աճի տեմպերով 2023 թվականին կպահպանի իր առաջատարությունը:

Լրագրողների հետ հանդիպմանը տնտեսագետ Թաթուլ Մանասերյանը նշեց, որ արդյունաբերական արտադրությունը ԵԱՏՄ-ում 2023 թվականի 5 ամսում աճել է գրեթե 2%-ով, Հայաստանում՝ 3%-ով:

Մանասերյանը հավելեց, որ ԵԱՏՄ-ում արդյունաբերական արտադրանքի աճի ցուցանիշով Հայաստանը 3%-ով երկրորդ տեղում է, առաջին կիսամյակի մաքսատուրքերի միջոցով նրան փոխանցվել է 34,3 մլրդ դրամ:

Նրա խոսքով՝ ակնկալվում է, որ Հայաստանի տնտեսության աճի ներուժը կավելանա Ռուսաստանից ներգաղթյալների եւ արտադրողականության բարձրացման հաշվին: «Հայաստանն ունի բոլոր հնարավորությունները գրանցելու տնտեսական ակտիվության առնվազն 9 տոկոս, հնարավոր է՝ 11-12 տոկոս աճ: Արտաքին եւ փոխադարձ առեւտրաշրջանառության ծավալը 2023 թվականի հունվար-հունիսին, 2022 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, աճել է 72,9%-ով: Հայաստանում հարկային եկամուտների եւ պետական տուրքերի ծավալն առաջին կիսամյակում աճել է 16,4 տոկոսով»,- հավելեց փորձագետը:

Նա մեջբերեց Հայաստանի վիճակագրական կոմիտեի տվյալները, ըստ որոնց՝ 2023 թվականի հունվար-հունիսին տնտեսական ակտիվությունը, 2022 թվականի հունվար-հունիսի համեմատ, կազմել է 11,4 տոկոս: «Այս տարվա վեց ամիսների արդյունքներով աճ է գրանցվել տնտեսության գրեթե բոլոր ճյուղերում՝ բացառությամբ էլեկտրաէներգիայի արդյունաբերության եւ արդյունաբերական արտադրանքի գների ինդեքսի: Առաջին կիսամյակում արդյունաբերական արտադրանքի ծավալը, 2022 թվականի հունվար-հունիսի համեմատ, աճել է 1%-ով: Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալն առաջին կիսամյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, աճել է 2 տոկոսով»,- ընդգծեց նա:

Թաթուլ Մանասերյանը նշեց, որ 2023 թվականի վեց ամիսներին, 2022 թվականի հունվար-հունիսի համեմատ, շինարարության ծավալն աճել է 17 տոկոսով, ներքին առեւտրի շրջանառությունը՝ 23,6 տոկոսով, ծառայությունների ոլորտի ծավալը՝ (առանց առեւտրի) 16,8 %-ով, իսկ միջին աշխատավարձը՝ 13,7%-ով:

Նրա խոսքով՝ արտաքին քաղաքական գործոնները բացասաբար են ազդում Հայաստանի տնտեսության վրա:

«Հանքագործների եւ մետալուրգների միության նախագահ, «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ գլխավոր տնօրենի առաջին տեղակալ Վարդան Ջանյանն ասաց, որ Ադրբեջանի գործողությունները կարող են հանգեցնել Հայաստանի տնտեսական աճի 10-20%-ի կորստի հանքարդյունաբերության վրա բացասական ազդեցություն թողնող գործընթացների պատճառով: Այս գործոնը նվազեցնում է Հայաստանի արդյունաբերության տնտեսական ակտիվության աճը: Հայաստանում 2023 թվականի հունվար-հունիսին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, պղնձի խտանյութի արտադրությունը նվազել է 23,3%-ով»,- եզրափակեց տնտեսագետը:

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 17 ՃՏՊ. 23 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ԿԱՐԵՎՈՐ

ՆԵՐԿԱՅԱՆԱԼ ՏՈՊՐԱԿՆԵՐՈՎ

ԼՂ-ում սնունդ ստանալու համար հարկավոր է ներկայանալ ձեթի տարայով եւ տեսակավորման համար անհրաժեշտ տոպրակներով:

Այս մասին հայտարարություն է տարածել ԼՂ սոցիալական զարգացման եւ միգրացիայի նախարարությունը:

«ԱՀ սոցիալական զարգացման եւ միգրացիայի նախարարությունը խնդրում եւ հորդորում է նախարարության կողմից սննդամթերք ստանալու նպատակով կտրոն ստացած անձանց պահեստ ներկայանալ պարտադիր ձեթի համար նախատեսված տարայով եւ տեսակավորման համար անհրաժեշտ 5 հատ տոպրակով: Սննդամթերքը կտրամադրվի միմիայն դրանց առկայության դեպքում»,- ասվում է հայտարարության մեջ:

ԱՊԱՀՈՎ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅՈՒՆ

«CAR SEAT»-ները՝ երեխաների պահող համակարգերը եւ ամրագոտիները, ճանապարհատրանսպորտային պատահարների հետեւանքով (ՃՏՊ) վնասվածքների կանխարգելման ամենաարդյունավետ միջոցն են:

Այս մասին հայտնում են ՀՀ առողջապահության նախարարությունից՝ նշելով, որ ՃՏՊ-ով պայմանավորված վնասվածքները հանրային առողջապահական լուրջ խնդիր են ինչպես այլ երկրներում, այնպես էլ Հայաստանում:

«ԱՀԿ տվյալներով՝ ՃՏՊ-ները 15-19 տարեկան երեխաների եւ դեռահասների մահվան առաջին գործոնն են, 5-14 տարեկան երեխաների շրջանում՝ երկրորդը:

ԱՀԿ ուսումնասիրություններով՝ CAR SEAT-երի ճիշտ օգտագործման դեպքում մինչեւ 1 տարեկան երեխաների մահացությունը կրճատվում է 70%-ով, ավելի բարձր տարիքի երեխաների մահացությունը՝ 54% -80%-ով,անվտանգության գոտի կապելու դեպքում 10 տարեկանից բարձր (150 սմ եւ ավելի հասակ ունեցող) երեխաների վթարների մահացու ելքը՝ 40-70 %-ով:

ՃՏՊ վնասվածքները հնարավոր է կանխարգելել. մինչեւ 7 տարեկան երեխաների համար պետք է օգտագործել car seat, 7 տարեկանից բարձր երեխաները պետք է օգտագործեն ամրագոտիներ»,- ասվում է հաղորդագրության մեջ:

ԱԼԿՈՀՈԼԻ ՓԱՌԱՏՈՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Սեպտեմբերի 8-ին, 9-ին, 10-ին Երեւանի Անգլիական այգում տեղի կունենա ալոհոլի ամենամեծ փառատոնը:

Կազմակերպիչները հայտնում են, որ միջոցառման մուտքն ազատ է բոլոր ցանկացողների եւ հյուրերի համար:

Փառատոնի ժամանակ ներկայացված է լինելու Հայաստանում արտադրվող խմիչքների ամբողջ տեսականին՝ հեղինակային թորած խմիչքներից մինչեւ ազնվական կոնյակներ: Հյուրերի ուշադրությանը ներկայացված կլինի ավելի քան 1500 տեսակի ալկոհոլային խմիչք:

ԲԱՑ ՆԱՄԱԿ

ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽՀԱՏՈՒՅՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Բաց նամակ՝ ՀՀ վարչապետ Փաշինյանին եւ ՀՀ գլխավոր դատախազ Ա. Վարդապետյանին քաղաքացի Մկրտիչ Քալաջյանից

Երեւան քաղաքի առաջին ատյանի դատավոր Արթուր Ստեփանյանի՝ 21.02.2020 թվի ԵԱԲԴ/0015/02/18քաղ. գործով ակնհայտ անարդար դատավճիռ կայացնելու արդյունքում ինձ պատճառած 2.357.000ՀՀ դրամի վնասի չափով դրամական փոխհատուցում ստանալու մասին:

Այսպիսով,

12.01.2018 թվին Երեւանի առաջին ատյանի դատարան հայցադիմում եմ ներկայացրել Գարիկ Ա. Նարիմանյանից 2.300.000 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջով եւ ներկայացրել 2.300.000 ՀՀ դրամի համար 08.02.2015 թվին տրված եւ պատասխանողի կողմից ստորագրված ստացական-պարտավորագիր:

15.01.2018 թվի որոշումով դատավոր Ա. Ստեփանյանը հայցադիմումս վարույթ է ընդունել, որի վաղեմության երեք տարվա ժամկետը անցած չի եղել՝ համաձայն ՀՀ քաղ. օրենսգրքի թիվ 332 հոդվածի, որը պահանջած գումարիս բռնագանձումը մերժելու համար պատճառ չէր կարող լինել: Դատաքննության ընթացքում Գ. Նարիմանյանը՝ փաստաբանը, միջնորդեց կիրառել վաղեմության ժամկետ, որին ես անմիջապես առարկեցի, սակայն դատավորն այն կիրառեց՝ հավանաբար անձնական շահագրգռվածությունից ելնելով:

09.12.2019 թվին նշանակվեց վճռի հրապարակման օր, որը չկայացավ:

Երեւի ինչ-որ խնդիր է առաջացել՝ «Я тебе, ты мне» սկզբունքով, որն էլ խանգարել է պատրաստի վճիռը հրապարակել:

21.02.2020 թվին երկրորդ անգամ վճռի հրապարակման օր նշանակված օրը հրապարակվում է նոր բովանդակությամբ խմբագրված վճիռը, որին ես ներկա չեմ գտնվել Covid-19-ով հիվանդ լինելու պատճառով:

Այդ վճիռը երեք օրվա ընթացքում ստանալու փոխարեն, այն ստացել եմ 15 ամիս անց՝ 24.05.2021 թվին, այսինքն՝ 450 օր ուշացումով, փոստի միջոցով, որը դատարանի կողմից դիտավորյալ է կատարվել՝ դատավորին պատժելու վեցամյա ժամկետը անցնելու համար:

Դատավճիռը 15 ամիս անց ինձ ուղարկելով՝ դատավորը դրսեւորել է դատական իշխանությունը վարկաբեկող վարքագիծ՝ համաձայն ՀՀ ՔԴՕ 124-րդ հոդվածի:

21.02.2020 թվին հրապարակված վճռով 2.300.00 ՀՀ դրամ բռնագանձելու հայս մերժվում է, եւ դա դեռ հերիք չէ՝ 46.000 ՀՀ դրամ էլ որոշվում է ինձնից բռնագանձել որպես պետական տուրք եւ դրան գումարած եւս 5.000 ՀՀ դրամ՝ որպես հարկադիր կատարման ծախս, որոնք արդեն մուծել եմ:

Համաձայն ՀՀ քաղ. դատ. օր-ի թիվ 179 հոդվածի 2-րդ կետի՝ վճռի օրինակը ոչ ուշ, քան դրա հրապարակման հաջորդ օրն ուղարկվում է գործին մասնակցող անձանց, եթե մինչ այդ առձեռն նրանց չի հանձնվել:

Վճիռն ինձ ուշացումով ուղարկելու նպատակը եղել է ինձ զրկել հետագայում վերադաս դատարան դիմելուց, որի արդյունքում կպարզվեր այդ վճռի անարդար լինելը, կբեկանվեր, պատասխանողն էլ տված նվերը հետ կպահանջեր:

Այդ «արդար եւ անկողմնակալ» դատավորի վճիռը ինձ պատճառեց 2.351.000 ՀՀ դրամի նյութական վնաս եւ բարոյահոգեբանական անսպասելի հարված, որն անկասկած ենթակա է փոխհատուցման պետության կամ այս խայտառակ վիճակը ստեղծողների կողմից:

Ելնելով վերագրյալից՝ խնդրում եմ դատավորի անարդար վճռից եւ անօրինակություններից ինձ հասցրած նյութական 2.351.000 ՀՀ դրամի վնասի չափով դրամական փոխհատուցում տալ:

Հ.Գ. Եթե պետությունը նման դատավոր է պահում, ապա նրա կատարած անօրինակությունների համար էլ պատճառած վնասները պետք է հատուցի:

Տուժած քոչակառու

Հ.Գ. 2 Լրացուցիչ տեղեկություններ կարող եք ստանալ ՀՀ արդարադատության նախարարի 20.05.2022 թվի N50-Ա որոշումից:

Սպասում եմ հանուն արդարության ստանալ ինձ պատճառված վնասի փոխհատուցում:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ՝ ԱՃՈՒՐԴԻ ՄԱՍԻՆ

Աճուրդի առաջին փուլը կայանալու է 8 սեպտեմբերի 2023 թվականին, ժամը 12:00-ին, ՀՀ, քաղաք Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31 հասցեում, այնուհետեւ, կայացվող աճուրդի յուրաքանչյուր հերթական փուլը կանցկացվի յուրաքանչյուր հաջորդ աշխատանքային օրը, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի ավարտը՝ 29.12.2023թ:

Աճուրդի կազմակերպիչն է «Բի Էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ), որն իրականացնելու է հետեւյալ լոտերի (այսուհետ՝ Լոտ) բաց աճուրդ «հոլանդական» եղանակով:

Աճուրդի պայմաններն են.

1.ԼոտՀՀ, Արմավիրի մարզ, համայնք Վաղարշապատ, Էջմիածին ք., Ջվարթնոց թաղամաս, Մարգարա խճուղի, 50/1 հասցեում գտնվող 472,6 ք.մ. անասնաշենք, 43,3 ք.մ. անասնաշենք եւ 0,2411 հա հողամաս (հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցված է ՀՀ 04.10.2005թ. N 199-Ն օրենքի 23-րդ հոդվածի պահանջների համաձայն, պայմանով՝ գույքի հետագա օտարման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումը կկատարվի վճարման պահին գործող հողամասի կադաստրային արժեքի վճարման անդորրագրերը ներկայացվելու դեպքում),

Լոտի մեկնարկային գինը՝ 41000000 (քառասունմեկ միլիոն) ՀՀ դրամ:

2.ԼոտՀՀ, Արմավիրի մարզ, համայնք Վաղարշապատ, Էջմիածին ք., Ե. Չարենցի փողոց, 3/2 հասցեում գտնվող 108,1 ք.մ. բնակելի տուն, 3,1 ք.մ. կաթսայատուն, 10,3 ք.մ. նկուղ, 15,5 ք.մ. ծածկ, 1,1 ք.մ. /2,2 խ.մ./ պարիսպ, 35,1 ք.մ. ծածկ եւ 0,027 հա հողամաս,

Լոտի մեկնարկային գինը՝ 20800000 (քսան միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ:

Միջնորդավճար՝ Լոտի ձեռքբերման գնի 1 տոկոսի չափով (այսուհետ՝ Միջնորդավճար),

Լոտերը գրավադրված են:

Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետեւյալ փաստաթղթերը.

Ֆիզիկական անձի դեպքում՝ անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ մասնակցի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը,

Իրավաբանական անձի դեպքում՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի եւ կամ ներկայացուցչի անձը հաստատող փաստաթուղթը եւ լիազորությունները հաստատող փաստաթուղթը, մասնակցի վկայականը:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով աճուրդավարի մուրճիկի 3 (երեք) հարվածից առաջ առաջարկել է ամենաբարձր գինը: Աճուրդում հաղթող ճանաչված մասնակիցը Լոտի գինը եւ Միջնորդավճարը վճարում է աճուրդի կայացման օրվան հաջորդող 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում՝ հաշվանցելով մուծված նախավճարի գումարը: Սահմանված ժամկետում գնորդի կողմից վճարումներ չկատարելու դեպքում Կազմակերպիչը կարող է աճուրդի արդյունքները համարել չեղյալ: Կարող են սահմանվել Լոտի գնի վճարման այլ ժամկետներ եւ չափաբաժիններ՝ վաճառողի եւ գնորդի կողմից համապատասխան փոխհամաձայնությամբ:

Աճուրդի մասնակցության նախավճարը կազմում է Լոտի ընթացիկ մեկնարկային գնի 1 (մեկ) տոկոսը, որի վճարման վերջնաժամկետը յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն է: Նախավճարը վճարվում է անկանխիկ՝ հետեւյալ հաշվեհամարին՝ 2470103374150000, կամ Կազմակերպչի կողմից տրամադրված այլ հաշվեհամարին, իսկ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում այն կարող է նաեւ վճարվել կանխիկ եղանակով աճուրդի կայացման հասցեում՝ Կազմակերպչի դրամարկղ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում:

Լոտերին կարող եք ծանոթանալ սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի բացմանը նախորդող օրը՝ յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը 10:00-ից մինչեւ 18:00-ն՝ զանգահարելով ստորեւ նշված հեռախոսահամարին եւ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու եւ վերջինիս պատճենն անվճար ստանալու համար դիմել Կազմակերպչին՝ ստորեւ նշված հասցե:

Կազմակերպիչը կարող է կատարել սույն ծանուցման փոփոխություններ եւ լրացումներ, որոնք կարող են իրականացվել այնպես, ինչպես կատարվել է աճուրդի մասին հրապարակային ծանուցումը: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել ստորեւ նշված հեռախոսահամարին կամ այցելել ստորեւ նշված կայքերը:

էլ. փոստ՝ llcbst@yahoo.com

հասցե՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31

հեռ.՝ +374 11 56 45 13

կայք՝ www.llcbst.am, www.borsa.am

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՇԱՆՈՒՅՑՈՒՄ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ՝ ԱՃՈՒՐԴԻ ՄԱՍԻՆ

Գ

«Ատաստ Ֆուդ» ՍՊԸ-ին պատկանող՝ ստորեւ նշված շարժական եվ անշարժ գույքերը հրապարակային սակարկություններով (աճուրդ) վաճառելու մասին

«ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանի կողմից 12.09.2023 թվականին ժամը 15:00-ին ք. Երեւան, Ադոնցի 6/1, 303 հասցեում կանցկացվի ՀՀ Սնանկության դատարանի թիվ ՍՆԴ/0888/04/21 սնանկության գործով 24.05.2021 թվականին կայացված վճռով սնանկ ճանաչված «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի ստորեւ նշված շարժական եւ անշարժ գույքերի հրապարակային սակարկություններով վաճառքը հետեւյալ լոտերով.

Լոտ 1 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, Վարսեր համայնքի տարածք հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝2480935:

Մ Մեկնարկային գին՝1,464,115 ՀՀ դրամ:

Լոտ 2 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Սեւան, հյուսիս արեւմտյան մաս, «Իշխան» ռեստորանի հյուսիս արեւմուտք հողատարածք հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝2161076:

Մ Մեկնարկային գին՝1,179,426 ՀՀ դրամ:

Լոտ 3 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, Աղբերք համայնք, փող. 13, հողամաս 11 բնակավայրի հող հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝2626848:

Մ Մեկնարկային գին՝508,373 ՀՀ դրամ:

Լոտ 4 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված, եւ Անուշ Միլիտոսի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, Շորժա համայնք բնակավայրի հող հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝2140468:

Մ Մեկնարկային գին՝427,033 ՀՀ դրամ:

Լոտ 5 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Մարտունի, Մյասնիկյան 3 նրբ., թիվ 24,26 հասցեում գտնվող տնամերձ հողամաս անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝2290379:

Մ Մեկնարկային գին՝622,757 ՀՀ դրամ:

Լոտ 7 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Ազատության 57/21 բնակարան հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝2430110:

Մ Մեկնարկային գին՝1,880,980 ՀՀ դրամ:

Լոտ 9 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Արարատի Մարզ, Մասիս համայնքում գյուղնշանակության հողամաս հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝2183736:

Մ Մեկնարկային գին՝566,837 ՀՀ դրամ:

Լոտ 12 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված Sharp սառնարան (տեխնիկական վիճակը՝բավարար)

Մ Մեկնարկային գին՝18,079 ՀՀ դրամ:

Լոտ 19 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված կաթսայատուն ընդհ. (տեխնիկական վիճակը՝բավարար)

Մ Մեկնարկային գին՝135,598 ՀՀ դրամ:

Լոտ 20 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված լվացման հոսքագիծ (տեխնիկական վիճակը՝անսարք)

Մ Մեկնարկային գին՝120,531 ՀՀ դրամ:

Լոտ 26 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված միրգ տրորող սարք (տեխնիկական վիճակը՝բավարար)

Մ Մեկնարկային գին՝15,066 ՀՀ դրամ:

Լոտ 27 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված ջարդիչ (տեխնիկական վիճակը՝անսարք)

Մ Մեկնարկային գին՝10,546 ՀՀ դրամ:

Լոտ 32 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված թրթուրավոր շղթա (տեխնիկական վիճակը՝բավարար)

Մ Մեկնարկային գին՝36,159 ՀՀ դրամ:

Լոտ 35 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված հյութ լցնող սարք (տեխնիկական վիճակը՝բավարար)

Մ Մեկնարկային գին՝45,199 ՀՀ դրամ:

Լոտ 36 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված լաբորատոր սարք (տեխնիկական վիճակը՝բավարար)

Մ Մեկնարկային գին՝15,066 ՀՀ դրամ:

Լոտ 37 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒ,անող եւ վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված ավտոկլավ փոքր երկու հատ (տեխնիկական վիճակը՝բավարար)

Մ Մեկնարկային գին՝39,172 ՀՀ դրամ:

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝

ա/ ֆիզիկական անձանց դեպքում՝ անձնագրի պատճենը,

բ/ իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի դեպքում՝ դրանց պետական գրանցում հավաստող փաստաթղթերի պատճենները,

գ/ աճուրդի մասնակցության վճարի եւ նախավճարի վճարումները հավաստող փաստաթղթերը (անդորրագրերը):

Աճուրդում ներկայացված բոլոր գույքերի վրա առկա են «Սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված սահմանափակումներ եւ հանդիսանում են գրավի առարկաներ:

Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք աճուրդին մասնակցելու համար կարող են աճուրդի մասնակցության հայտ(եր)ը ներկայացնել ՀՀ սնանկության դատարան սույն հայտարարությունը հրապարակվելուց հետո մինչ– աճուրդին նախորդող օրվա ժամը 16:00-ն ընկած ժամանակահատվածում:

Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք վճարում են մասնակցության վճար եւ նախավճար, որոնք կազմում են տվյալ լոտի մեկնարկային գնի համապատասխանաբար 1 (ոչ ավել քան 10,000 ՀՀ դրամը) եւ 5 տոկոսները: Մասնակցության վճարը եւ նախավճարը ենթակա են վճարման «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ սնանկության գործով թիվ 2480102725520000 «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ հատուկ հաշվին՝ մինչ– աճուրդի մասնակցության հայտ(եր)ը ՀՀ սնանկության դատարան ներկայացնելը:

Սույն հայտարարությամբ նախատեսված աճուրդի օրը կարող է փոխվել եւ/կամ հետաձգվել՝այդ մասին աճուրդի օրվանից ոչ պակաս երեք օր առաջ համապատասխան հայտարարություն կատարելու միջոցով:

Աճուրդն անցկացվելու է բաց դասական (գնի ավելացման) եղանակով, հետեւաբար աճուրդում հաղթող է համարվում առավել բարձր գին վճարող մասնակիցը:

Աճուրդում հաղթող ճանաչվելու դեպքում, լոտի արժեքը ենթակա է վճարման աճուրդն անցկացնելու օրվանից 10 (տասը) օրյա ժամկետում սնանկության հատուկ հաշվին լոտի գնման գինը՝հաշվանցելով նախօրոք վճարած նախավճարը:

Աճուրդում հաղթող համարվող անձի հետ առուվաճառքի պայմանագրի կնքման, դրանից ծագող իրավունքների պետական գրանցման, գույքը գնորդին փոխանցելու եւ պայմանագրից բխող բոլոր անհրաժեշտ ծախսերը ենթակա են կատարման աճուրդում հաղթող համարվող անձի կողմից:

Աճուրդի անցկացման, լոտի ծանոթացման եւ ուսումնասիրության համար դիմել սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանին (հեռ.՝060 500 250, էլ. Փոստ՝ makar.yeg@gmail.com)՝ աշխատանքային օրերին 11:00-16:00-ն ընկած ժամանակահատվածում:

ՄԱՐՔԱԿԱՆ

8 ՄԵԴԱԼ ԵՆ ՆՎԱՃԵԼ

Հայաստանի սպորտային մարմնամարզության հավաքականի երիտասարդ անդամներ Համլետ Մանուկյանն ու Մամիկոն Խաչատրյանն ընդհանուր առմամբ 4 ոսկե, 3 արծաթե եւ 1 բրոնզե մեդալ են նվաճել Եգիպտոսի մայրաքաղաք Կահիրեում անցկացված սպորտային մարմնամարզության Pharaoh's cup մրցաշարում. այս մասին տեղեկացնում են ԿԳՄՍ նախարարությունից:

Համլետ Մանուկյանը 4 ոսկե մեդալ է նվաճել՝ լավագույնը ճանաչվելով «Զուգափայտ» (13,600 միավոր), «Օղակներ» (13,650), «Նժույգ թափեր» (14,300) ու «Ազատ» վարժություններում (13,150):

Մամիկոն Խաչատրյանը երեք արծաթե մեդալ է նվաճել «Զուգափայտ» (13,150), «Օղակներ» (13,000) ու «Ազատ» վարժություններում (13,000), իսկ «Նժույգ թափեր»-ում դարձել է բրոնզե մեդալակիր՝ վաստակելով 13,850 միավոր եւ կանգնելով պատվո հարթակի երրորդ աստիճանին:

Մարմնամարզիկները մրցաշարին մասնակցել են մարզիչ Արտակ Այդինյանի ղեկավարությամբ:

ԶԱԽԱՐՅԱՆՆ ՈՒ «ՌԵԱԼ ՍՈՍՅԵԴԱԴ»–Ը

Ռուսաստանի ազգային հավաքականի կիսապաշտպան Արսեն Զախարյանը իր շնորհանդեսին նվիրված ասուլիսում խոսել է իսպանական «Ռեալ Սոսյեդադ» ակումբ տեղափոխվելու մասին: Այս մասին հայտնել է իսպանական ակումբն իր ֆեյսբուքյան էջում:

«Ես սիրում եմ գրոհել ու գոլ խփել, ինչպես նաեւ օգնել թիմին ամեն հարցում: Ուրախ եմ լինել նման հրաշալի ակումբում: Միշտ հետեւել եմ իսպանական ֆուտբոլին ու այս թիմին: Ցանկանում էի խաղալ այստեղ, հետեւաբար երկար չմտածեցի, երբ լսեցի «Ռեալ Սոսյեդադ»-ի հետաքրքրության մասին: Ամենաշատն ինձ դուր եկավ, որ այս ակումբն իրոք ցանկանում էր պայմանագիր կնքել ինձ հետ եւ հնարավոր ամեն բան արեց դրա համար: Չէի սպասում, որ այսքան ջերմ կընդունեն ինձ: Առայժմ չգիտեմ, թե կկարողանամ արդյոք մասնակցել հաջորդ խաղին»,- ասել է Զախարյանը:

Հայ ֆուտբոլիստը վեց տարվա պայմանագիր էր կնքել իսպանական ակումբի հետ: Տրանսֆերի համար Լա լիգայի ներկայացուցիչը 12 միլիոն եվրո է վճարել Մոսկվայի «Դինամո»-ին:

Զախարյանը «Դինամո»-ի սան է, 2021 թվականից խաղում էր մոսկովյան ակումբի գլխավոր թիմում, որի կազմում անցկացրած 89 խաղում դարձել է 19 գոլի եւ 25 գոլային փոխանցման հեղինակ: Ընթացիկ մրցաշրջանում կիսապաշտպանը «Դինամոյի» կազմում մասնակցել է 5 հանդիպման ու դարձել 2 գոլի եւ 1 գոլային փոխանցման հեղինակ:

ՀԵՏԱՔՐՔԻՐ

NARAR–Ը՝ ԽԱՆԱՂՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ամիսներ առաջ ռուսաստանաբնակ երգիչ Սեւակ Խանաղյանը հանդես եկավ հերթական դուետ կատարմամբ NARAR-ի հետ:

Թե ով էր NARAR-ը, անհայտ էր, բայց զուգերգը սիրվեց շատերի կողմից: «Փնտրում եմ քեզ» («Ищу тебя»). ահա այսպես է կոչվում երգը, որի գաղափարը, «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով, առաջացել է հենց NARAR-ի մոտ:

NARAR-ը կամ Նարեկը «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում պատմեց, որ երգի հեղինակը հենց ինքն է.

«Երգը գրելուց հետո ընկերոջս՝ներկայումս պրոդյուսերիս՝ Գեւորգի միջոցով կապ հաստատեցինք Սեւակի հետ, նրան ուղարկեցինք երգի դեմո տարբերակը: Խանաղյանի ձայնին ու ոճին, կարծում էինք, շատ կսազի»:

Նարեկի խոսքով՝ Սեւակը միանգամից հավանել է երգը, ապա պայմանավորվել են ձայնագրել:

«Այս երգը, բացի հանդիսատեսի լավ արձագանքից, ինձ մեկ ուրիշ կարեւոր բան էլ է տվել՝հենց Սեւակին: Խանաղյանը կարծես մեծ եղբայրս լինի այսօր»,- պատմում է Նարեկը:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում NARAR-ը, խոսելով հետագա հավանական զուգերգների մասին, նախընտրում է անակնկալ անել հանդիսատեսին, սակայն խոստանում է, որ մինչեւ այս տարվա վերջ կթողարկի ալբոմ, դե իսկ սեպտեմբերին էլ հանդես կգա սոլո կատարմամբ:

ՄԱՐԻԱՄ ՂԱՋԱՐՅԱՆ

ՁԱՅՆԸ ԿՏՐՎԵԼ Է

Երգչուհի Լոլիտա Միլյավսկայան շարունակում է ելույթները՝ չնայած ձայնի հետ կապված խնդիրներին: Իր Telegram ալիքում նա տեսաուղերձ է հրապարակել երկրպագուներին, որում ցույց է տվել, թե ինչպես է այժմ հնչում նրա ձայնը: Կատարողի մոտ բրոնխիտ է ախտորոշվել, եւ նա որոշել է հիվանդությունը կրել ոտքերի վրա, ինչպես նաեւ բեմում:

«Սիրելիներս, բարի օր բոլորին: Ինձ մոտ բրոնխիտ են ախտորոշել... Ստիպված էի աշխատել, աշխատանքի ազդեցությունն օգնեց, բայց անհնար էր խոսել: Դրա համար ես համբուրում եմ քեզ: Վաղը կշարունակեմ աշխատել, այսօր կփորձեմ լռել եւ քիչ ծխել»,- ասել է արտիստուհին:

Միլյավսկայան կարծում է, որ իր դեպքը միայն հաստատում է երկրով մեկ վիրուսի «քայլելու» մասին լուրերը: Աստղը կարծում է, որ պատվաստված հիվանդներն ավելի հեշտ են դիմանում հիվանդությանը: Ինքը՝երգչուհին, չի խուսափում պատվաստումներից, հետեւաբար, կարծում է, նույնիսկ այնպիսի բարդ հիվանդություն, ինչպիսին բրոնխիտն է, ընթանում է առանց մարմնի ջերմաստիճանի բարձրացման, ինչը թույլ է տալիս դուրս չմնալ ստեղծագործական գործընթացից:

● *Օգոստոսի 25-ին «Բոհեմ» թատրոնում տեղի կունենա «Իմ կնոջ անունն է Մորիս» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝2000-5000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Գորիսում ինչպե՞ս կարող եմ ստանալ զվարճանքի, շահումով խաղեր կազմակերպող օբյեկտների՝ ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվություն:

Տարոն Հայրոյան (40 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Համայնքի տարածքում առեւտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղեր եւ վիճակախաղեր կազմակերպող օբյեկտների համար ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվություն ստանալու նպատակով անհրաժեշտ է դիմել Գորիսի համայնքապետարան՝ ֆինանսատնտեսական եւ եկամուտների հավաքագրման բաժին:

Համապատասխան թույլտվությունը տրամադրվում է 3 օրվա ընթացքում: Նշված տեսակի այն օբյեկտները, որոնք ժամը 24.00-ից հետո գործունեություն չեն իրականացնում, ֆինանսատնտեսական եւ եկամուտների հավաքագրման բաժին են ներկայացնում հայտարարություն՝ ժամը 24.00-ից հետո աշխատելու վերաբերյալ: Գորիս համայնքի ավագանու համապատասխան որոշմամբ սահմանվել է տեղական՝ տուրք մեկ տարվա համար՝

ա) համայնքի տարածքում առեւտրի օբյեկտների՝ ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվություն՝ 50000 դրամ մուծում համայնքի բյուջեի 900285125457 հաշվին,

բ) համայնքի տարածքում շահումով խաղերի կազմակերպման օբյեկտների՝ ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվություն՝ 375000 դրամ մուծում համայնքի բյուջեի 900285125457 հաշվին,

գ) համայնքի տարածքում վիճակախաղերի կազմակերպման օբյեկտների՝ ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվություն՝ 120000 դրամ մուծում համայնքի բյուջեի 900285125457 հաշվին,

դ) համայնքի տարածքում խաղատների՝ ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվություն՝ 750000 դրամ մուծում համայնքի բյուջեի 900285125457 հաշվին,

ե) համայնքի տարածքում բաղնիքների (սաունաների)՝ ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվություն՝ 375000 դրամ մուծում համայնքի բյուջեի 900285125457 հաշվին,

զ) համայնքի տարածքում հանրային սննդի եւ զվարճանքի օբյեկտների՝ ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվություն՝ 50000 դրամ մուծում համայնքի բյուջեի 900285125457 հաշվին:

Գորիսի համայնքապետարան

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Գորիսի համայնքապետարանի ֆինանսատնտեսական եւ եկամուտների հավաքագրման բաժնի հասցեն է Գորիսի համայնքապետարան, Անկախության 3, 2-րդ հարկ, հեռախոս՝ 2-61-31, բաժնի պետ՝ Նարեկ Մնացականյան:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՐՑ. Ո՞վ է հեղինակային իրավունքի իրավատերը:

Քրիստինա Քոչարյան (26 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հեղինակ է ճանաչվում այն ֆիզիկական անձը, ում ստեղծագործական, մտավոր աշխատանքի արդյունքում ստեղծվել է ստեղծագործությունը («Հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդված):

Հեղինակը կարող է իր բացառիկ գույքային իրավունքները փոխանցել կամ օգտագործման թույլտվություն տրամադրել այլ անձանց, որոնք, հեղինակից ձեռք բերելով այդ իրավունքները, դառնում են ստեղծագործության նկատմամբ հեղինակային իրավունքի իրավատեր:

Մտավոր սեփականության գրասենյակ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հեղինակային իրավունքով պահպանվող ստեղծագործությունների հեղինակները եւ նրանց ժառանգներն ու իրավահաջորդները (որոնք սովորաբար կոչվում են իրավատերեր) օգտվում են «Հեղինակային իրավունքի մասին» օրենքով տրամադրվող իրավունքներից:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Ֆուտզալի Հայաստանի չեմպիոն «Երեւանը» մեկնել է Կիպրոս: Մայրաքաղաքային թիմը կմասնակցի Չեմպիոնների լիգայի նախնական փուլի մրցաշարին:

G խմբում «Երեւանի» մրցակիցները կլինեն Կիպրոսի «ԱԵԼ Լիմասոլը» (օգոստոսի 23), շվեյցարական «Միներվան» (օգոստոսի 24) եւ Սան Մարինոյի «Ֆիորենտինոն» (օգոստոսի 26) հետ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+12 + 15 +25 + 29
Կոտայքի լեռներ	+11 + 13 +26 + 29
Կոտայքի նախալեռներ	+20 + 21 +30 + 33
Գեղարքունիք	+11 + 14 +20 + 24
Լոռի	+10 + 14 +26 + 30
Տավուշ	+15 + 20 +28 + 32
Արագածոտնի լեռներ	+ 9 + 11 +25 + 27
Արագածոտնի նախալեռներ	+17 + 22 +32 + 36

Արարատ	+17 + 21 +35 + 37
Արմավիր	+15 + 17 +35 + 37
Վայոց ձորի լեռներ	+10 + 12 +24 + 27
Վայոց ձորի նախալեռներ	+17 + 21 +35 + 37
Սյունիքի հովիտներ	+18 + 22 +32 + 34
Սյունիքի նախալեռներ	+11 + 14 +26 + 29
ԼՂՀ	+17 + 21 +30 + 33
Երեւան	+19 + 21 +31 + 33

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **22.8.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*